ՆՈՐ-ԴԱՐ

№ 76 ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 4 Մայիսի 1895 Հինգշաբթի 4 Մայիսի ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 76

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատը՝ 5 կ.
բաժանորդ դրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը:

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչեւ 2-ը: Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ:

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում մայիսի 1-ից եւ վճարում են 7 րուբլի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայոց գործերը:
Քրոնիկոն.— Թրքա-Հայաստանի վերանորոգութիւնները: Է. Դիլլոն: Վատ մարդուից: Կառավարչա պետի վերադարձը: Շամախուց: Նաւագնացութիւն Սեանի լճի վրայ: Շուշուց: Կարճեանից: Ատարայից: Սարիղամիշից: Համառուսական ցուցահանդէս: Նոր հրատարակութիւններ:
Նամակ խմբագրութեան:
Թղթակցութիւններ.— Նամակ Թիւրքիայից—Կ. Պոլիս:
Քաղաքական.— Մադագասկար: Իտալիա. Քաղաքական լուրեր:
Խառն լուրեր.
Հեռագրներ.
«Նոր-Դար»-ի պատասխաններ:
Բանասիրական.— Նկարչական գեղարուեստը մատենագրների մէջ:
Տեղեկատու:
Յայտարարութիւններ:

ՀԱՅՈՑ ԳՈՐԾԵՐԸ

Լոնդոնից, ապրիլ–27-ից (մայիսի 9) «Նով. Վր.»-ին հեռագրում են հետեւեալը.

«Times», Standard», «Morning Post» թերթերը դառապարտում են Հայաստանի միտինգ կազմելը, մասնաւորապէս դատապետում են Արգալլի Հերցոգի արտասանած ճառը: «Marning Post»-ը յայտնում է, որ Խրիմի պատերազմը տեղի ունեցաւ անգլիական կաբինետի լիմարութեան պատճառով, որի անդամներից մինն էր Արգալլի Հերցոգը: «Վեսամինստերեան Ազգի» կարծիքով Խրիմի պատերազմի շարժառիթը «բուլղարական սարսափներն էին, իսկ Բերլինի դաշնագրի հեռանքը—հայկական կոտորածները: Ներկայումս Թրքա-Հայաստանի գործերի դրութիւնը բարեփոխելու միակ միջոցը՝ հայերի իրաւունքներին «գործնական նայէս» պաշտպան կանգնելն է, սակայն միակ տէրութիւնը, որ կարող է այդ կատարել, միայն Ռուսիան է: Հայերը կարող էին ապատուել, եթէ գոյութիւն ունենար անգլօ-ռուսական համաձայնութիւնը, գժբաղդաբար այդպիսի համաձայնութիւն գոյութիւն չունի: Հայասէրների պարագլուխները աշխատում են, որպէս զի Հայաստանի կառավարութիւնը յանձնուած լինի տէրութիւնների ձեռքով արեւմտեան Եւրոպայի բնիկներից ընտրուած մի փոխարքայի: Ոմանք իրրեւ թեկնածու առաջարկում են Հերցոգ Տէկին, ուրիշները ցանկանում են աւստրիական արքունին:

—

Հայոց խնդրի մասին, որ արդէն դրուած է եւրոպական դիւանագիտական սեղանի վրայ, Վենայի պաշտօնական «Politisch. Corresp.» թերթը հետեւեալն է հաղորդում.

«Հայաստանի մէջ տիրող կառավարութեան վատ վիճակը բարելաւելուն վերաբերեալ առաջարկութիւնների՝ մասին շահագրգռուող տէրութիւնների դեսպանները կատարեալ համաձայնութեան գալով, զեկուցում են ուղարկած իրենց կառավարութիւններին ի հասատատումն, որից յետոյ այդ առաջարկները պիտի մատուցին Բ. Դրան, առանց սպասելու Բերլինի նահանգում պատահած անցքերի քննութեան հետեւանքներին:

—

Երզնկայից անգլիական «Times» թերթին հաղորդում են, որ թուրքական կառավարութիւնը, ձերբակալելով մահմեդականների՝ քրիստոնեանների դէմ պատրաստած դաւադրութեան սարագլուխներին, կարողացել է սարսափելի կոտորածի առաջն առնել, որ պիտի լինէր թուրքերի և քրիստոնեաների միջև:

ՔՐՈՆԻԿՈՆ

Տեղի ազութիւն պատճառով «Նոր-Դար»-ի այս համարում չկարողացանք հրատարակել Կ. Պոլսի մի ոչ-սովորական մի թղթակցի նամակը, որ վերաբերում է Թրքա-Հայաստանում վերանորոգութիւնները մացնելու խնդրին:

Այդ թղթակցութիւնից ցուցնում իմանում ենք, որ մեր սիրելի և ամենայն համակրութեան արժանի ս. պատրիարք Իզմիրլեանը տկարացել է ինֆլուէնցայով:

—

Երկուշաբթի, մայիսի 1-ին, Ղարսից մեր ստացած հեռագրից երեւում էր, որ Է. Դիլլոնին վերստին սպասում էին Ղարսում: Այդ հեռագիրը չհրատարակեցինք, սպասելով աւելի ճիշտ տեղեկութիւնների այդ մասին:

Մայիսի 3-ին ստացել ենք մեր թղթակցից հետեւեալ հեռագիրը.

«Սարդարամիչ, 3-ն մայիսի, 8. ժ. 33 վ. առաւօտեան:

Երէկ երեկոյեան այստեղ հասաւ է. Մ. Դիլլոնը և իջաւ իրրեւ հիւր Խանհաքեանների տունը: Այսօր նա Ղարս է մեկնում:

—

Ուրեմն տեղական թերթերում հրատարակուած այն հեռագիրը վաղաժամէր, որով ընթերցող հասարակութիւնը պիտի կարծէր, թէ պ. է. Մ. Դիլլոնը արդէն մայիսի 1-ին թրքական սահմանից մեր կողմն է անցել:

—

ՂԱՄԱՐԼՈՒԻՑ.—Ապրիլի 28-ին, ցերեկուայ ժամը 11½-ին տեղս ժողովեց Կովկասի կառավարչապետ գեն-անդ. Ս. Ա. Շերեմետեւը: Նորին բարձր գերազանցութիւնը բարեհաճեց նախ մանել տեղիս զաւառական հիւանդանոցը. այնտեղ գնաց իրեն համար իրրեւ իջեւանատեղի պատրաստուած ռուսաց դպրոցը: Դպրոցի դարպասի մօտ չքեղ յարմարական կամար էր կանգնեցուած, որտեղից մինչև հիւրասենեակը գետինը ծածկուած էր գորգերով: Դպրոցի շինութիւնը զարդարուած էր դրօշակներով, կանաչով և լապտերներով: Ժողովրդի կողմից մատուցուեցաւ աղուհաց. Եղան գրաւոր և բերանացի խնդրատուներ և բողոքարկուներ: Գլաւոր բողոքներից մէկը Իգդիրի գաւառի հասարակութիւնից էր: Ղամարլուի հասարակութիւնը խնդրատուեալ եղաւ կոռ-ու-բեդեաը վերացնելու: Ընդունելութեան ժամանակ հաւաքուած էին գաւառիս զանազան գիւղերից մարդիկ և կանայք—մօտ 10 հազար հոգի: Շինութիւնների կառուցները լիքն էին հանդիսատեսներով: Ներկայ էին Երևանի հայանդատական դին. Ֆրեզէն, Պատտեեան կողակնների դնդի հրամանատար Դարկինը, Երևանի նահանգական բժշկի օգնական Անդրէասեանը, Երևանի գաւառապետ Սիլիչը Հին-Նախիջեանի Պոստ-հեռագրատան կառավարիչ Զիժիկը և մէքանի այլ բարձրաստիճան պաշտօնեաներ: Այդտեղ էին և գաւառիս քահանաներից 11 հոգի, հայոց դպրոցի ուսուցիչներն և ուսուցչուհին իրենց աշակերտներով ու աշակերտուհիներով, ռուսաց ժողովրդական դպրոցի, այլև արհեստագիտական դպրոցի ուսուցիչներն իրենց աշակերտներով: Ոստիկանութիւնը կարգը լաւ էր պահպանում: Դպրոցում նախաճաշիկ անելուց յետոյ, նորին բարձր գերազանցութիւնը ժամը 12½-ին բարեհաճեց մեկնել Ղամարլուից դէպի Բաշ-Նորաշէն, ուր և դիմելիս էր: Այնտեղից ապրիլի 29-ին բարեհաճելու էր մեկնել Հին-Նախիջեան:

—

Կովկասի կառավարչապետի վերադարձը Երևանեան նահանգից սպասւում է վաղը, մայիսի 5-ին:

ՇԱՄԱԽՈՒՅ.—Թեմիս առաջնորդ գեր. Մակար սրբազանը ապրիլի 26-ին ժամանեց տեղս: Կիրակի օրը, ս. պատարագից յետոյ, հոգեհանգիստ կատարեց ի Տէր հանգուցեալ Կիւրեղ եպիսկոպոսի յիշատակին: Եկեղեցին լիքն էր հասարակութեամբ. չորքով կանգնած էին տղայոց ուսումնարանի աշակերտները, բոլոր հանդիսականներին մոմեր բաժանուեցան: Եկեղեցին հանդիսաւոր կերպարանք էր ստացել, երբում էր ուսուցիչ պ. Մարտիրոսեանի քառաձայն խումբը:

Հոգեհանգստից յետոյ, նորին սրբազնութիւնը համառօտ կերպով պատմեց հանգուցեալի կեանքն ու կատարած գործերը: Կիւրեղ եպիսկոպոսի յիշատակն անմոռանալի պիտի մնայ մեր մէջ, մասնակցելով հանգուցեալի 1892 թուի խոլերայի ժամանակ մեզ մօտ հիւր եղած ժամանակ եկեղեցում խօսած խրախուսական քարոզները և մեր ցոյց տուած հայրական երախտիքը: Հանգուցեալը բնաւ մահից չէր վախենում, ամբողջ օրերով զբաղմանուցում մի ժամկոչի հետ խոլերայից մեռածներին թաղում էր՝ կարզ կատարելով, երեկոները ննջեցեալների անհներին այցելում, ննջեցեալների ծնողներին և բարեկամներին ս. աւետարանի խօսքերով մխիթարում էր: Պատահում էր, որ ննջեցեալի տէրը նրան դիմաւորում էր. «Հայր սուրբ, տունս վարակուած է, ինչու էք գալիս, դուրս կացէք»: Ս. Կիւրեղը պատասխանում էր. «Ինչ մի վախէք, մենք ալ մահկանացու ենք»:

—

Եղբ. Մովիանեաններից և Ընկ. Թիֆլիսի առևտրական տունը ձեռնարկում է Սեանի լճի վրայ նաւագնացութիւն հաստատելու: «Նով. Օր.»-ի ասելով, Կովկասի պետական իշխանութիւնն արդէն վերջնականապէս քննել է այդ բանի համար ներկայացուած ծրագիրն և մօտիկ ապագայում կ'առաջարկուի միներատութեան ի հաստատութիւն: Եղբ. Մովիանեանների և Ընկ. առևտրական տունը կառավարութիւնից խնդրում է միայն մի արտօնութիւն, այն է՝ որ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԿԱՐՉԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ՄԷՋ:

Եթէ խալամական զորանը սկզբից մինչև վերջ թերթենք և աչքի տակով անցկացնենք նրա բոլոր տողերը, կգտնենք անտեղի կերպով արգելուած չատ պատուներ, որոնք քաղաքակրթ մարդու համար անմեղ զուարճալիքի առարկաներ են: Սակայն իր ուխտադրած նպատակին հասնելու համար, արաբացի կողմնակ և վայրենաբարոյ ցեղի դէմ խելօք Մուհամմէդը ուրիշ կերպ պինուել չէր կարող, եթէ ոչ խիստ օրէնքներով, գրաւոր պատուէրներով:

Տարաբաղդաբար զորանի մէջ նրովքի հնութարկուած անմեղ գայթակղութիւնների չարքում վեհերուած է և մեր այժմեայ վրոյի առարկան—նկարչական գեղարուեստը: Զորանը ստատիկ արգելում է ուսումնասիրել մարդկային մարմնի արտաքին և ներքին կազմակերպութիւնը, ինչպէս և չի թոյլատրում դծագրել բնութիւնը: Նա անիծում է նկարիչներին, վերագրելով նրանց բանաստեղծական բոլոր աչխատութիւններն Աստուծոյ դէմ գործուած մեղքերին:

Բայց և այնպէս նկարչական ազատ գեղարուեստն ամեն տեղ մուտք գործեց. նա քաղաքացիական իրաւունք ստացաւ նոյն իսկ խստակեաց արաբացիների մէջ այն ժամանակ, երբ նրանք տիրապետեցին գեղարուեստական տաղանդների բոյն գարձած Բիւզանդիային: Բնութիւնն ընծայել է մուսուլմաններին ֆէնոմէնը գնահատելու ճաշակը: Բիւզանդիոնում արաբացիները հրապուրուելով գեղարուեստի վայելից, տակաւին մուացան իրենց մարդարէի խոչոր տառերով գրած կանոնը: Նրանք Ադամի գերը կատարելով, այդ գրաւիչ —արգելուած պաղլ համն առան: Այսպէս, իսլամի սրտիկը սկսելով գեղարուեստը, սկսեցին հետևել նրան և յառաջադիմութեան մեծ քայլեր արին այն ժամանակ, երբ նրանց իշխանութեան սքեսը տեղափոխուեց Դամասկոս: Բացի նկարչութիւնից, նրանք այնտեղ համարեա բոլոր արուեստների մէջ իրենց բիւզանդացի վարպետներին էլ գերազանցեցին: Այստեղից

բանաստեղծութեան նշանաւոր հերոսների և ուրիշ անձերի պատկերները:

Մինչդեռ գեղարուեստը արաբացիների մէջ հետզհետէ ծաղկում և ծլում էր, համակրօն պարսիկներն ու տաճիկները զրանը տուել, աւանձնացել, նուիրել էին իրենց անձն այս ս. գըրքի ընթերցանութեան: Նրանք խորչում էին հեռանալուն և գործունեայ արաբներից, իրրև մահմեդական օրէնքին հակառակ հոտնկոպով գնացողներից: Այդ դէռ բաւական չէ. համազատան ազդերը, զորանի սիրով վառուած, ըսկսեցին գաղտնի կերպով ոչ միայն ատել մեծ մարգարէի հետևակորդներին, այլ և յարմար դէպքում նրանցից վրէժ առնել. որովհետև բացի գեղարուեստից, արաբացիները հետևում էին և ուրիշ գիտութիւններին, որոնց թուումն էին տաղաբաչխութիւնն ու բժշկականութիւնը:

Սակայն վերստորուած պարսիկներն և տաճիկները ժամանակի հանգամանքներից մեղմացած, սկսեցին իրենց ուենցած տեսլութիւնն ու վրէժխնդրութիւնը փոխարկել սիրոյ և անկեղծ համակրութեան դէպի արաբացի եղբայրների գեղեցիկ ճաշակն ու բարձր գրգռումները, աւելի և աւելի ծանօթանալով նրանց գրականութեան հետ: Այսպիսով միայն զորանի տուած արգելքները ոչնչացան, և գեղարուեստական ճարտարապետութեան մի նոր դարագլուխ բացուեց, որ կոչուեց արաբական բիւզանդական: Այս նոր չքնաղ արարքի նկարիչ-ճարտարապետներն էին, որ առնգծեցին հոյակապ չէնքեր, վայելչատիպ սիւներ, մարմարեայ նուրբ արձաններ, հրաչալի քանդակագործ և ծեփած ծաղկանկար զարդեր և այլն: Այս գեղարուեստական կրթարանը տուեց Արաբիային չատ նկարիչներ, որոնք իրենց վրձինի տակից լոյս հանեցին մուսուլման ժողովրդի սրտի սիրած չատ պատկերներ, այն է. «Աւժանաւորները Մուհամմէդի դրա խոտում», ուր այդ երջանիկները կամ վարսի օթոցների վրայ նստած, կամ թիկն տուած նախշուն մութաքաներին՝ չքնաղատեսած կիսամերկ հիւրիներով-փերիներով վերևից նայում են մեզաւորների վրայ և հրճուում (դժոխքը գտնուել է դրախտի ներքին յարկում), «Միզուորները դժոխքում», «Սողոմոն թագաւորն և նրա արդար դատաստանը», Սողոմոնի բանտարկած վոքրիկ, սպիտակ պոչաւոր «չէյթանը», «Մահ մարդարէ և նրա հարազատ սերունդը հանդերձեալ աչխարհի վառքի մէջ», «Հազար և մի գիչեր» կոչուած յայտնի

ՄԱՏՆԱՆՇԻՆ 3.—Մեր պետական կյանքի մեջ մեծ դեր ունեցող մարդկանց մեջ, թերևս, ոչ ոքի անունը այնքան հաճախ չի հիշատակվում, որքան Մատնանշինի։ Ամեն անգամ, որ խոսք է լինում մեր ներքին վարչական կամ տնտեսական կյանքի մասին, մեր մամուլի էջերում անպատճառ հանդիպում ենք Մատնանշինի անունին։ Ամեն անգամ, որ մեր հասարակական կյանքում ինչ-որ նոր շարժում է նկատվում, մեր ուշադրությունը անպատճառ դարձվում է Մատնանշինի վրա։ Ամեն անգամ, որ մեր հասարակական կյանքում ինչ-որ նոր ուղղություն է ստան

րոնեան Թերակղզու (Բագու) արտադրութիւնը համեմատած 5 տարի առաջ արտադրուածի հետ, տասնից առաջ արտադրութիւնը վերջին քառամսեակի արտադրութիւնները սկսել են աստիճանաբար նուազիլ, սակայն տարբերութիւնն աննշան է,—նաւթը տանալու համար սովորականից աւել պիտի փորել գիտինը,այն է՝ 250—300 սաժէն։ Արտադրժամանակը թէև անցեալ տարուանից աւելի են, բայց առատ է։ Նաւթատունքերը համեմատած 5 տարի առանից առաջ եղածների հետ, այժմ կրկնապատկուած են։ Նաւթի ընդհանուր վիճակագրական տեղեկութիւնների մասին մենք կ'պատանեք ուրիշ անգամ։

Բագու։

Գողթնեցի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի Թղթակցից)

Կ. ՊՈԼԻՍ, 26-ին ապրիլի։

Սրանից միքանի օր առաջ Կեսարիայում *) հետեւեալ դէպքն է տեղի ունեցել, որ, մի մտանաւոր նամակից առնելով, չտապում եմ հաղորդել։

Կեսարիոյ չուրջը, 1-2 ժամ հեռաւորութեան վրայ գտնուող հայ գիւղացիները սովորաբար առաւօտները գալիս են քաղաք՝ Կեսարիա զանազան աշխատութեամբ պարապելու, իսկ երեկոները վերադառնում են իրենց գիւղերը։

Միքանի օր սրանից առաջ թուրք աւազակների մի խումբ յարձակուելով քաղաքից տուն վերադարձող հայ գիւղացիների վրայ, կողոպտում են։ Կեսարիոյ կառավարութիւնը թէև գործն իմացած է, բայց որ և է տրնօրինութիւն չի արել չարագործներին պատժելու համար։

* * *

Մի ուրիշ դէպք։

Ս. Յարութեան տօներին Սրուսաղէմում մի ինչ-որ մի նկարիչ լուսանկարում

*) Մեր Արամ նահապետի օրով և Մշակ մարզպանի ձեռքով շինուած քաղաքն է, որ մարզպանն իր տեսնով Մշակ կոչեց, իսկ ժողովուրդը չկարողանալով հնչել, Մուժակ կոչեց։ Այս քաղաքը կրկին անգամ վերաշինեց հռոմայեցոց Ցուլիոս Կեսարը, որ և Կեսարիայ անուանեց. իսկ ժամանակի ընթացքում, մահտանդ թուրքերի սիրասիութիւնից յետոյ, այդ անունն էլ աղաւաղուելով կամ փոխուելով Ղայսար կամ Ղայսերի կոչուեց։

վրձինով այնքան քամում են, որ վերջը խեղճերին հասցնում են ոչ մի բան նեի չնմանող արարածների. օրինակ, գեղեցկատես մոխրագոյն սոխակին նկարում են կարմիր, կապոյտ, դեղին, ան ու սպիտակ գոյներով, իսկ այդ թռչնիկի սիրած վարդին տալիս են այնպիսի ֆանտաստիկական ձև ու գոյներ, որ ոչ մի բուսաբան նրանց կարող չէ ճանաչել

Սակայն պէտք է խոստովանել, որ պարսիկ նկարիչները բաւականաչափ կրթուած և զարգացած են, եթէ միայն այդ բաները կարելի է նրանց համար գործածել։ Խօսեցէք նրանցից մրի հետ ուզում էք, և նա ճարտարախօս քարոզչի պէս կբացատրէ ձեզ դորանի ամբողջ բովանդակութիւնը։ Նրանք աւելի են ոգևորուում, երբ խօսակցութիւնը վէրդամբար Մուհամմէդի, նրա ազգական Հազրեթ-Ալու, վերջինի որդոց—Հասանի և Հուսէյնի մասին է լինում։ Այս բոլոր դրամայ հարազատ սրբերին բնկերում արաբացի նկարիչները նկարել են ծածկուած դէմքերով, որպէսզի նրանց սուրբ երեսները չկրեան մահկանացուների աչքին, որովհետև դորանը մարդկային, նամանաւանդ սրբերի դէմ է հայ եկեղեցական քափօրներից մի տեսարան հանկարծ եկեղեցական դասով ու հայ ուխտաւորներով։ Բնականաբար նկարիչն այդ անում է իր չահի համար, և դա կատարելապէս յաջողւում է, որովհետև ամեն մի ուխտաւորը չատապում է այդ լուսնկարիչ ունենալ ի յիշատակ իւր ս. տեղն արած այցելութեան։

Բայց երբ ուխտաւորները Նաֆայից դուրս են գալիս Խակինդերունի նաւամատոյցը, կառավարութիւնը բոլոր թրքահպատակներից դրաւելով այդ լուսնկարները պատռում է տակով, թէ արգելուած է այդքան հայ միատեղ լինել։ Ահա բարեկարգ մի երկիր ուր արգելուած է հայի անչունչ տատիրներն էլ միատեղ լինելու։ Շատ խիստ հարցաքննութիւնների ու նեղութիւնների ենթարկելուց յետոյ, իրաքանչիւր մի լուսանկարի համար հայ ուխտաւորներից 2-ական օսմանեան ոսկի (17 ր.) տուգանք առնելով՝ թողնում է նրանց։

* * *

Վանում մեծ իրարանցում է տեղի ունեցել։ Վանեցիք սովորութիւն ունին Յատկի երկուշաբթի կամ երեքշաբթի օրը դուրս գալ գալար։ Ահա այստեղի ոստիկան պինուրների և ժողովրդի մէջ ինչ-որ ընդհարում է տեղի ունենում և գործը մեծանալով, ինչպէս լսում ենք, երկու կողմից էլ մեծ կոտորածներ են լինում։ Ասում են 600 հայ է ապանուած ու վիրաւորած։ Այս թուի չափազանց չատ լինելն էր, որ այդ լուրն իւր ժամանակին չհաղորդեցինք, աւելի ստոյգ տեղեկութիւն ձեռք բերելու համար։ Սակայն հաղորդակցութեան դժուարութիւնների պատճառով ճիշտ տեղեկութիւն ստանալ չկարողացանք։

Բայց եթէ այս թիւը չափազանցուած էլ լինի, այնուամենայնիւ ստոյգ է, որ այդ ցաւալի դէպքը տեղի է ունեցել։

* * *

Սուրբ Յարութեան երեկոյին լոյս առաջ կամ յետոյ ստանալու համար մեծ կռիւ է տեղի ունեցել Սրուսաղէմի ս. Փրկչի վիմեղմանի վրայ հայ և յոյն ուխտաւորների մէջ։ Կռիւը տեղի է ունեցել մօտ մէկ ժամ. յոյները նահանջել ու դուրս են փախել։

Սա իսկապէս ցաւալի բան է և հակառակ քրիստոնէական խաղաղասիրութեան, բայց արան տեղը տուողը միշտ եղել է և է յոյն կղերը, որի գլխում ոտրատիկի կերպով մեխուած է այն պատուիրը, թէ անպատճառ առաջնութիւնն իրեն է պատկանում։

Դէմ Յիսուսի վարդը քննէին...

* * *

Կարինում (Երզրում) նոյնպէս բաւական է հայ եկեղեցական քափօրներից մի տեսարան հանկարծ եկեղեցական դասով ու հայ ուխտաւորներով։ Բնականաբար նկարիչն այդ անում է իւր չահի համար, և դա կատարելապէս յաջողւում է, որովհետև ամեն մի ուխտաւորը չատապում է այդ լուսնկարիչ ունենալ ի յիշատակ իւր ս. տեղն արած այցելութեան։

Բայց երբ ուխտաւորները Նաֆայից դուրս են գալիս Խակինդերունի նաւամատոյցը, կառավարութիւնը բոլոր թրքահպատակներից դրաւելով այդ լուսնկարները պատռում է տակով, թէ արգելուած է այդքան հայ միատեղ լինել։ Ահա բարեկարգ մի երկիր ուր արգելուած է հայի անչունչ տատիրներն էլ միատեղ լինելու։ Շատ խիստ հարցաքննութիւնների ու նեղութիւնների ենթարկելուց յետոյ, իրաքանչիւր մի լուսանկարի համար հայ ուխտաւորներից 2-ական օսմանեան ոսկի (17 ր.) տուգանք առնելով՝ թողնում է նրանց։

* * *

Վանում մեծ իրարանցում է տեղի ունեցել։ Վանեցիք սովորութիւն ունին Յատկի երկուշաբթի կամ երեքշաբթի օրը դուրս գալ գալար։ Ահա այստեղի ոստիկան պինուրների և ժողովրդի մէջ ինչ-որ ընդհարում է տեղի ունենում և գործը մեծանալով, ինչպէս լսում ենք, երկու կողմից էլ մեծ կոտորածներ են լինում։ Ասում են 600 հայ է ապանուած ու վիրաւորած։ Այս թուի չափազանց չատ լինելն էր, որ այդ լուրն իւր ժամանակին չհաղորդեցինք, աւելի ստոյգ տեղեկութիւն ձեռք բերելու համար։ Սակայն հաղորդակցութեան դժուարութիւնների պատճառով ճիշտ տեղեկութիւն ստանալ չկարողացանք։

Բայց եթէ այս թիւը չափազանցուած էլ լինի, այնուամենայնիւ ստոյգ է, որ այդ ցաւալի դէպքը տեղի է ունեցել։

* * *

Սուրբ Յարութեան երեկոյին լոյս առաջ կամ յետոյ ստանալու համար մեծ կռիւ է տեղի ունեցել Սրուսաղէմի ս. Փրկչի վիմեղմանի վրայ հայ և յոյն ուխտաւորների մէջ։ Կռիւը տեղի է ունեցել մօտ մէկ ժամ. յոյները նահանջել ու դուրս են փախել։

Սա իսկապէս ցաւալի բան է և հակառակ քրիստոնէական խաղաղասիրութեան, բայց արան տեղը տուողը միշտ եղել է և է յոյն կղերը, որի գլխում ոտրատիկի կերպով մեխուած է այն պատուիրը, թէ անպատճառ առաջնութիւնն իրեն է պատկանում։

Դէմ Յիսուսի վարդը քննէին...

* * *

Կարինում (Երզրում) նոյնպէս բաւական քեր նկարելը առատիկ արգելում էր։ Բայց քաղաքակրթութիւնն և ժամանակի պահանջները մահմեդական խստապարոյ օրէնքները մեղմացնելով, թոյլ տուին Պարսկաստանում Հազրեթ-Աբբաս-Ալուն և չատ սրբերի երեսները բաց նկարել և հաւատացեալ ժողովրդին արժանացնել նրանց լուսափայլ տեսքին։ Ալին գնացած և սիրտանքով լի դէմքով մի հոկայ անձն է, ալիքանման սև միրուքով, սուրը ձեռքին և կանաչ կտաւն հագին (այդ գոյնով հագուստ կարող է հագնել միայն վէյդամբարի սերունդը)։ Նա նստած է վագրի կաշուի վրայ և գլուխը խիստ կերպով լուսաւորուած։ Բայց այդ, պարսիկ նկարիչները բանաստեղծական ոգով կրպտամեն ձեզ անհամար հետաքրքիր պատմական տեղեկութիւններ ու առասպելական անցքեր։ Նրանք կբճատեն Հուսաամ-Ջալի մասին, որը քաջութեան հերոսների բուն հերոս է եղել իւր ժամանակում, Մէջլումի և Լէյլիի, Շահ-Իսմայիլի և Գիւլի-Չաուի, Աբարի-Չանգի, Քհօռ-Օղլու, Հիւսէին-Քիւրդի և ուրիշ չատ հերոսների մասին, որոնք իրենց ռոմանթիկական սիրով և վիշապի այժմ արարացի երդիչների և զրուցների բանաստեղծութեան նիւթ են դարձած, Սողոմոնի բանաստեղծած սպիտակ փոքրիկ «էչխիանի» մասին, որին հազար տարի սրանից առաջ մուսուլմանները գտել են Բազդադ քաղաքում պղպեղաձոյ ամիսի մէջ։ Այս բոլորի պատկերներն էլ ունին պարսիկ նկարիչներն և նրանց իրրև նմուշ պահում են խնամքով, որ հարկաւոր դէպքում նրանցից օգտուեն։ Ուստամ-Ջալին սովորաբար ներկայացնում են հերկիւլեսեան կազմուածքով, սև, գանգուր մազերով և տղամարդի միրուքով, ոսից ցգուելս վիշապած. իսկ Մէջլումը—սիրոյ կրակից բորբոքուած մի անձն է, որն ընկած մի լայնատարած անապատ երկիր, իւր չքնաղատես գազաններից օգնութիւն է խնդրում, որ կորած սիրահարին գտնէ. նրան էլ նկարում են այնքան նիհար, ինչպէս քաղցած ագռաւ։

Այդ զարմանալ պատմական և առասպելական բովանդակութեամբ պատկերների արտանկարելու մէջ պարսիկ նկարիչներն այնքան վարժուած են, որ առանց իսկականին նայելու, սիրած նկարը միքանի րոպէում կրպտարտատեն, խստութեամբ պահպանելով նրա բոլոր մանրամասնութիւնները։ Տարաղարաս պիտի ասենք, որ այդ անչնորհք պատկերների երջանիկ ժամանակների արևը մայր է մտել։ Մի ժամանակ երանք ամեն մի մուսուլմանի համար մեծ արժէք ունէին, բայց հիմի՝ փոխանակ թագաւորական և իշխանական պալատների զարդ լինելու, զարդարում են մահմեդական դիւղացիների գետնափոր իրճիթների ծխից մրոտած ու սևացած պատերն և բազանիքների ներսը։ Նրանց այդպիսի ողբալի վիճակի հասցնողը մեր ժամանակի պատկերազարդ հանդէսներն են, որոնք Պարսկաստանում նոյն նշանակութիւնն ունեն, ինչպիսին—Եւրոպայի աչքին ի ցոյց հանուած նշանաւոր տաղանդների բանաստեղծական աշխատութիւնները։ Այժմ պարսիկ դժբաղդ նկարիչներն իրենց օրը խաւարած տեսնելով, ապրուստի դուռ գտնելու համար, չարունակում են զբաղուել փոքր ի չատէ օգտաբեր նախչերով, առատութեամբ քանով զբաչամանների, արկղների, մատուցարանների և այլ առարկաների վրայ իրենց անպէտք նկարները։

Վերջացնելով մեր զրոյցը, աւելորդ չէր լինիլ վերջին անգամ մի ակնարկ ևս ձգել պարսիկ նկարչի վրայ, որն իւր գեղարուեստականոյի և իւր գերի մէջ ընդունակ է եւրոպացի նկարչի վրձինին հասարդքիր նիւթ մատակարարելու։ Պարսիկ նկարչի գեղարուեստականոյը լայն, փիանջարայով լուսաւորուած մի մեծ, անշուք սենեակ է, ուր կամ-կարասիքի հետ անդամ չի երեւում։ Յատակի վրայ, այստեղ-այնտեղ ընկած և պատերից ու պատուհաններից քարշ ալած ներսը նրա օրուայ ապրուստի գործիքներն են։ Կանաչ-կարմիր ապակիներով զարդարուած լուսամուտի առաջ մի հին մաչուած՝ քրքրուած գորգի վրայ ծալապատիկ նստած է ինքը՝ նկարիչը։ Բոլոր պատուհանները խառն ի խառն թափուած են նրա մօտ դրուած գունաւոր վրայ։ Նրա ձեռքին «պալիտրայ»ն տեղ մէկը միւսին յաջորդող այլ առարկաներ են, այն է՝ կամ չարդուած տանձի կտոր, կամ գոմշի ու ցուլի գանգ։ Վրձինները պատրաստած է իւր ձեռքով և սեփական մազերից։ Բերանում անբաժան չիբուխն է, որին հանգստութեան րոպէներում փոխարինում է կողքին դրուած երկարաթոզ զալիանը, իսկ ծնկների վրայ՝ գործն է, որ նոյն օրը պէտք է վերջացնէ, վարդը պատրաստ լինի։

Պահբքուզդ։ Սէրան։

Ուստայիչը թէև չդիմաց կառավարութեան բողոքով, բայց հրաժարական տուեց գլխոցի վարչութեան. միայն լսում ենք, թէ վարչութիւնը նրա հրաժարականը չէ ընդունել։

Եւ չատ էլ լաւ է արել. դրանով նա պեղծիկ կիսլով ապացուցել է, թէ արքան վհատնէն է հայը, և արքան՝ օտար, թուրք ուստայիչը։

* * *

Հայաստանի բարեկորոգումների համար մի ծրագիր էր կազմել սուլթանը. բայց որովհետև այդ ծրագրով բոլորովին չէր սպասովեցնում Թրքա-Հայաստանի հայ ժողովրդի բարօրութիւնը, այդ պատճառով, երբ նա ներկայացրեց անգլիական, ռուսական և ֆրանսիական դեսպաններին, այս վերջիններս չատ քաղաքավարութեամբ մերժեցին, ասելով, թէ Թրքա-Հայաստանի բարեկորոգման ծրագրի կազմելու հարն իրենք կըստանձնեն։

Աւժանահաւատ աղբիւրից լսեցինք, թէ յիշեալ երեք պետութիւնների ներկայացուցիչներն միանալով նաև միւսները, չտապում են հայկական խնդիրը վերջնականապէս լուծելու, նախ քան ճապոնեւրոպական խնդրի այսպիսի կամ այնպիսի կերպարանք ստանալը։ Ընդհանուր համոզում է, թէ մօտ օրերս այդ ծրագիրը պատրաստ կլինի և անմիջապէս կներմուծուի սուլթանին ի կատար ածելու։

Mars

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԱԴԱԳԱՍԿԱՐ. — Մատաղտակարի Մաժունգ քաղաքից Միտցինգեր գնդապետի հաղորդած տեղեկութիւնների համաձայն, ֆրանսիական զօրքը մեծ յաջողութիւն է ունեցել Մարովոայի մօտ։ Ֆրանսիացիները դուռած են չատ թնդանօթներ և բազմաթիւ հոգի ների են բռնած։ Հատատների ունեցած կորուստը համեմատաբար չատ աւելի մեծ է քան ֆրանսիացիներինը։

Բերլինի «Tageblatt» թերթը Մադագասկարից, մայիս 3 թուականով (Ն. ս.) ստացած մի հեռագիր է հրատարակել, որի մէջ յայտնուում է, որ երկու ֆրանսիացի պինուր գերի ընկնելով հատատների ձեռքը, դրանցից մէկին կախել, իսկ միւսին չարչարել են։ Առհասարակ հատատները՝ հակառակ այն հանգամանքին՝ որ ամեն տեղ պարտութիւն են կրում, միւս կողմից ստոտիկ անգթութեամբ են վարուում երբեմն երբեմն իրենց ձեռքը գերի ընկած օտարականների հետ, զորե դեռ

լով նրանց վրայ ամենավարնեի խըստութիւններ։

ԻՏԱԼԻԱ.—Հռոմից հաղորդում են, որ իտալական պաչտօնական մամուլը խիստ կերպով քննադատում է վճռաջինջ տեհանի՝ Զիոլիտտիի գործի արդարացումը։ Մանաւանդ անյարմարութիւն է յայտնում արձակուած վճռի այն մասի վերաբերութեամբ, ուր ասում է, թէ մինիստրի դէմ դատական քննութիւնը կարող է յարուցանել միայն պատգամաւորների պալատը, իսկ պատիժը—վերապահուած է կառավարչական սենատին, ըստ որում պատգամաւորների պալատն իրաւունք ունի գործին ընթացք տալ և կամ բոլորովին ընդհատել։ «Giornale» թերթը յոյս ունի, որ պալատը բոլորովին կըմերժէ Զիոլիտտիի գործի քննութեան առաջարկը, իսկ այդ գործողութիւնը, նրա խօսքով, առ միչտ կոչնչացնի Զիոլիտտիին թէ բարոյական և թէ քաղաքական յարաբերութիւնների վերաբերութեամբ։

—

ՔՈՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Բերլինից «Нов.»-ին հեռագրում են հետեւեալը. «Ճապոնիան ցանկանում է, որ միջազգային յանձնաժողով կազմակերպուի կանոնաւորելու համար եւրոպական տէրութիւնների առևտրական յարաբերութիւնները հեռաւոր Արեւելքում։

—

Մայիսի 5-ին (17) իչխան Բիսմարկը ընդունել է Քրիստիանզացի 800 անձնաւորութիւնից բաղկացած մի պատգամաւորութիւն, որոնց թւում կային և բազմաթիւ կանայք։ Պատգամաւորութեան ներկայացուցչի արած բարեմաղթութիւններին իչխան Բիսմարկը պատասխանել է երկայն ճառով, ուր յիչած է նաև Շլեյզվիգ-Հոլչտէյնի և Հիւսիսային Ջրանքի բացման մասին։

—

Արտաստանման բանուորների մայիսի 1-ի ուղեկան ուրախութիւնները՝ համեմատաբար անցեալ տարիների՝ առաւել խաղաղ են անցել։ Մադրիդից, Վիեննայից, Բերլինից, Բերնից, Բրիւսելից, Հռոմից, Լոնդոնից և ուրիչ քաղաքներից ստացուած տեղեկութիւնների համաձայն մայիսի 1-ը այդ տեղերում անցած է առանց խիստ միջադէպերի։

—

Սէր Գարկուրը անգլիական համայնքների պալատին ներկայացրեց ներկայ տարուայ բիւդջէն, որից երեում է, որ անցեալ տարուանից աւելցած է

766,000 ֆ. ստ., ներկայ տարուայ ծախքը հաշուած է 95,982,000 ֆ. ստ., իսկ մուտք—95,662,000 ֆ. ստ., որով բաց է մնում 320,000 ֆ. ստ.։

—

«Temps»-ին Լիոնից հաղորդում են, որ այնտեղի առևտրական վարչութիւնը Չինաստան է ուղարկում մի քանի գործակալներ ուսումնասիրելու համար առևտրական խնդիրները չին-ճապոնական խաղաղութիւնից յետոյ։

—

Ապրիլի 26-ից, Կոբեից Լոնդոն հեռագրում են, որ ճապոնական վաճառականական մի նաւի վրայ խոլերայ է յայտնուել։

—

Իտալական նոր պարլամենտը պիտի գումարուի յունիսի 8-ին կամ 10-ին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Մի եղել էր.—Մի չատ հետաքրքրական երկրաբանական երևոյթ ներկայումս Հռոմի ուսումնական աշխարհի ուշադրութիւնը գրաւել է իւր վրայ։ Բանը նրանումն է, որ քաղաքից 32 կիլոմետր հեռաւորութեան վրայ մի դիշերուայ մէջ կազմուած է ահագին մի լիճ։ Հռովիները, որոնք՝ դէպքի բերմամբ՝ ականատես են եղել այդ արտասովոր երևոյթին, պատմում են, թէ լիճը կազմուել է յանկարծ և թէ իրենք հազիւ են կարողացել իրենց հօտերով ազատուել վերահաս վտանգից։ Այդ երևոյթն առաջացած է երկրաշարժից, որի ժամանակ լսուելիս են եղել խուլ որոտումներ. միևնոյն ժամանակ,—որ չատ օտարոտի է երևում,—հռովիները միաբերան վկայում են, թէ տեսել են, որ երկրի ճեղքուածքից բոցեր են դուրս եկել։

Լիճը կազմուած է Leprignano գիւղաքաղաքի մօտ, որից և ստացել է նա իւր անունը։ Լճի եղերքները, լայն և խոր ճեղք է տալով, չորս-նակ ընդարձակւում են։ Ամենայն հաւանականութեամբ այդ երևոյթով այսուհետև կըզբաղուին ոչ միայն իտալացի դիտնականները, այլ և օտարերկրեայ երկրաբանները, սկսելով լուրջ կերպով ուսումնասիրել արտասովոր լիճը, նրա ափերն ու ջուրը, որն իւր մէջ պարունակում է մի տեսակ անծանօթ գազ։

Լճի մօտակայ բնակիչները խիստ ուրախ են բնութեան այդ պարգևի վրայ, և արդէն կազմակերպուած են ընկերութիւնները չահագործելու այդ լիճը, որի ջուրը, ինչպէս երևում է, առողջարար ազդեցութիւն ունի իւր մէջ հանքային տարրեր պարունակելու պատճառով։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ
ՌՈՒՍԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Մայիսի 2-ից.

—

Գէքսէլի կուրս 3 ամսով։
Լոնդոնի վրայ 10 ֆ. ստ. 93,
Բերլինի վրայ 100 մարկ . 45,40
Գարիզի վրայ 100 ֆր. . . 36 80
Գէքսէլի կուրսի տրամաբր. խաղաղ է։
Նոր կտրած պոլուիմպերիալներ . . . . . 7,40 — 7,42 վաճ.
Մաքսային կուպ. (100 ր. մետալով) . . . . . 147¹/₄ — 148¹/₄
Բորսային վեկլը 5-ից 7%
4% Պետակ. արժեթղթ. 99⅝
5% ոսկ. արժեթղթ. 1884 թ. 165
5% Առաջ. Ներքին փոխ. խաղատոմս 1864 թ. . . . 238
5% Երկր. Ներք. փոխառ. խաղատոմս 1866 թ. . . 225
Ազնուակ. հող. բանկի . . գրաւակ. խաղատոմս . . 208
5% Պետակ. երկաթուղ. արժեթղթ 101⅞
4% Ներքին փոխ. I սեր. . 99¹/₄
,, ,, ,, II ,, 99
,, ,, ,, III ,, 99,
,, ,, ,, IV ,, 99
4¹/₂% փոխ. 1893 թուի . . 101⅞
,, փոխ. 1 հրատակ. 101⅝
,, փոխ. 2 հրատարակ. 101⅝
4¹/₂% Գրաւակ. արժեթղթ. աղն. հողային բանկի . . 101⅝
4¹/₂% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր . . 150⅝
5% Ս. Պետ. քաղ. վ. բնկ. 101⅝
,, ,, Մոսկուայի . . . 101¼
5¹/₂% Գերեսայի 100⅜
5% Թիֆլիսի . . . . . 95⅝ գն.
5¹/₂ Գրաւակ. արժեթ. հող. բանկերի Խարկովի . . . 100¼
,, Գալտաւայի 100
,, Տուլայի 100¼
,, Կիևի 100
,, Մոսկուայի 100¼
,, Բեսարաբիայի 100
,, Ներքին-Սամարայի . . 100
,, Դոնսկոյ 100¼
,, Վիլենսկի 100
6% Թիֆլիսի կալ. բանկի 101 գն.
5% ,, ,, ,, 99³/₄ վաճ.
6% Քութայիսի կալ. բանկ. 101 գն.
5% ,, ,, ,, 99³/₄ ,,

ՆՈՐ-ԴԱՐ-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

ԳԱՆՁԱԿ, պ. Յ. Խ.-ին.—Ձեր ստած պարոնին յայտնեցէք, որ նչե՛ ամսուայ բաժանորդագինը 3 ր. 50 կ. է։

—

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ, Z. Z.-ին.—Դուք հարցնում էք, թէ ստացել ենք արդեօք խմբագրութեանս անուան ուղարկուած 38 րուբլին։ Ո՛չ, չենք ստացել։ Ստացել ենք պոստով 36 րուբլի, խնդրում ենք նայեցէք ձեր ստացած պոստային անդորրագիրն և այդ մասին մեզ միամտացրէք։

Դուք ձեր նամակումը մեզ խորհրդներ էք տալիս։ Այդ ձեր վաղեմի սովորութիւնն է, և մենք ամենայն համբերութեամբ կարդում ենք, դիտմամբ, որ ձեր խորհրդների աղբիւրը բաւի ցանկութիւնն է։ Ձեր բաւի ցանկութիւնն ընդունելով և դնահատելով, չենք կարող ասել, որ դուք լաւ ճանաչում լինէք Ռուսիայի դանազան քաղաքներում բնակուող հայ հասարակութիւններին։

Դուք ասում էք, որ դրանք նեղանում են, երբ մի որ և է զօրեղ բառ է գործ դրում հակառակորդի դէմ։ Հապա մի՞թ լոդիկայով էք բացատրում ձեր այն խօսքերը, որ ասում էք, թէ հակառակ կողմն իւր գործն առաջ է տանում, աջողեցնում է միմիայն հայհոյանքով, սանձարձակ լեզուով ու զրպարտութիւններով... Ձչմարիտ է վերջումն աւելացնում էք, թէ «Նոր-Դար»-ի պէս լուրջ և բարձր կանգնած թերթը չի կարող փողոցային թերթին վայել լեզու բանեցնել—և այդ վերջին նկատողութիւնն մենք ընդունում ենք։ Բայց ինչ դրութեան մէջ է և ինչ ասպիճանի վրայ է գտնւում մի հասարակութեան արժանապատուութեան զգացումը, որի մէջ փողոցային լեզու բանեցնող, զրպարտութեամբ միայն իրենց գոյութիւնը պահպանող թերթերն աջողութիւն են գտնում։

Դուք պարոն, այդպիսի հասարակութեան անունով մեզ խորհրդներ գրելու իրաւունք չունէք։

Եթէ հասարակութիւնը փարիսեցութեամբ չի վարուած, նա չպէտք է մէկ կողմին ասէ, թէ դու բարձր ես, դու մի զօրեղ բառ անգամ չպէտք է գործ դնես, այս չի վայելիլ քեզ, իսկ միւս կողմը քաջալերէ իւր լռութեամբը, անտարբերութեամբն և առանձին հաճոյքով կարդայ ամեն տեսակ անձնական յարձակումներ։

Պարոն, մեր խորհուրդը լաւ լսեցէք. առաջ լաւ ուսումնասիրեցէք հայ հասարակութիւնները և յետոյ նրանց մասին դիտողութիւններ գրեցէք։

Ա՛յ, տեսէք, այստեղ մի թերթ ունինք, որ ուզում է իրեն համար կուսակցութիւն սարքել, զօրով գնել, և նպատակին հասնելու համար նա յարձակւում է կուսակցութիւնների դէմ աջ ու ձախ

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ



Ռուսաց Հ. ոգ. Ընկ.

Ամեն շաբաթ շոգենաւերի երթեւեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պոլսոյ միջեւ

Բաղնո՞յ պատրաստ է գնո՞ւ

Շաբաթ օրերը լոյս կերակուր, դիշերուայ 3 ժ., չքնաղաւուր ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով. Նովոռոսիյսկի Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սեւաստոպոլի և Եւպատորիայի, վրայով։

Երեքշաբթի օրերը՝ լոյս չորեքշաբթի, դիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար չոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը՝ լոյս հինգշաբթի, դիշերուայ 4 ժամին, չքնաղաւուր ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օդեսայից գալիս է Բաթում

Երկուշաբթի օրերը առաւօտեան՝ ուղիղ ընթացքով։

Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը, երեկոյեան չքնաղաւուր ընթացքով։

Երկուշաբթի օրերը, դիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար չոգենաւը՝ չքնաղաւուր ընթացքով.

Գործակալութիւնը գտնւում է Թիֆլ. Կալ. բանկի գալերէյում №№ 117—118

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



(M.) 10—5

ԽՈՏԵՐԻ ԿԱՐԱՄԵԼ
Հաշի տէր՝
„ԿԵՏՏԻ ԲՈՍՍ“
Բ. ՍԵՄԱԴԵՆԻ ԿԻԵՒՈՒՄ

Գլխաւոր պահեստը Ալէքսանդր Վենցէլի մօտ, Պետերբուրգում, Բոլշոյովայա, 33, Վաճառւում է Ռուսիայի բոլոր գեղատներում և գեղատ. խանութներում։

Գինն է ծրարէ մէջ տրուկիով 25 կոպէկ։
(M.) 20—13

Լոյս տեսաւ
ՐԱՖՅԻ
ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Բ. տիպ.

Գինն է 1 ր. 75 կոպ. հանապարհածախսով—2 րուբլի

Դիմել՝ Տիֆլիսէ, Աննէ Раффи

(651) 5—2

ԵՐԳԱՐԱՆ
«ՀԱՅԻ ՅԱՒԱԼԻ ՎԻՃԱԿԸ ԿԱՐԻՆԻ ԵԳԲԵՐԻ ՄԷՋ».

վերնագրով։ Վաճառւում է յօգուտ Ատրախանում նոր բացուելիք սեմինարիայի։ Տատհետաքրքիր համեն հայի համար։ Գինն է 1 րուբ. 10 կոպ. կոմմնակի ժախքերով։ Դիմել՝ Астрахань, д. Усейнова, А Г. Кузнецову.

(634) 10—9



ԼԻԱԿԱՏԱՐ
ՅԱՐՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ափիսի, կաւէ ամանեղէնի և փայլեայի ափիսի չոգեգործարանների համար

ՍԱՏԿԱԲԱՐԱԿՈՒՄ Է, ԻԲՐԵՒ ԵՐԿԱԲԱՄԵԱՅ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, ԱՄՈՒԲ ԵԻ ԾԱՆՐԱԿՇԻՌ ԳՈՐԾ

LOUIS JAGER Maschinenfabrik, Köln Ehrenfeld

(M.) 3—2

„ԹԱՏՐՈՆ“

Գրական և թատերական հանդէսի ներկայ 1895 թուակ.
ԱՌԱՋԻՆ №-Ը (ԳԻՐՔ III-ՐԴ)
ԼՈՑՍ ԿՐՏԻՄՅԻ ՄԻՆՉԵՒ ՄԱՑԻՍԻ 15-Ը

ՍԱՐԿԱՒԱԳ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅՈՒՂՈՒԻՐԵԱՆ

ՄՈՒԱՑՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ

Առաջին և Երկրորդ գիրք

Առաջին գիրքը — 60 կ. երկրորդը — 50 կ., երկուսը միասին —1 ր.։ Ծանապարհածախքը վճարում է գնողը իւրաքանչիւր գրքին 7 կ.։ Դիմել՝ Тифлисъ, Николаевская, №10, архидіакону А. Джугурянъ. կամ Թիֆլիսի գրավաճառներին։

Машинно-строительный, чугунно-мѣдно-литейный заводъ
ТОРГОВАГО ДОМА
Заводъ учрежденъ въ 1863 г.
ГУСТАВЪ ЛИСТЪ
Въ Москвѣ
ОТДѢЛЕНІЕ ВЪ БАКУ.
Издѣлія завода удостоены 42 высшихъ наградъ.

Имѣетъ постоянно на складѣ въ Баку и принимаетъ заказы на:

Пожарныя трубы всевозможныхъ размѣровъ и конструкціи для усадебъ, селъ, деревенъ, фабрикъ, заводовъ, промысловъ и т. д.

Садовыя трубы и гидропульты. Для городовъ большія ручныя, приводныя и паровыя пожарныя трубы. Лучшіе пеньковые, резиновые и кожанные рукава и принадлежности къ трубамъ.

Локомобилы и молотилки: завода Маршалъ, сыновей и К° въ Англіи.

Арматура: лучшей доброты

Инжекторы: „Инфлуксъ“.

Насосы паровые: „Вартингтонъ“, „Камеронъ“, „Блэкъ“ и Букауской системъ, всѣхъ размѣровъ.

Насосы ручные и приводные: Американскіе, лондонскіе, вращательные, бриджпортскіе, цѣпные. Горизонтальные и вертикальные колифорнскіе насосы. Ассенизаціонные насосы и насосы системы „Фаулера“, „Летестю“, „Алвейлера“. Спеціальные и центробѣжные насосы и т. п.

Паровые котлы: горизонтальные и вертикальные.

Паровыя машины: горизонтальныя и вертикальныя, одноцилиндровыя, двухцилиндровыя, системы „Танги“ и другія.

Буровые инструменты всякіе.

Десятичные вѣсы: системы „Шузейлъ“, сотенные вѣсы для взвѣшиванія возовъ, вагонные вѣсовые помосты, горизонтальные столовые вѣсы и чугунныя клейменныя десятичныя гиры.

Трубы газо-водо-паро-проводныя. Желѣзныя клепанныя трубы для пароваго отопленія, дымогарныя и чугунныя вертикальной отливки.

Фитинги и инструментыя машины къ трубамъ, всякіе.

Инструментальныя машины всякія и переносныя кузницы, домкраты, лебедки, дефференціалные и обыкновенные блоки.

Вентиляторы: „Шиле“, „Рута“ и другіе.

Приводные ремни: кожанные англійскіе, русскіе, американскіе пеньковые, резиновые и проч.

Трансмиссія всякія.

Каталоги высылаются безплатно по первому требованію.

Адресъ для телеграммъ: **Листъ Москва—Баку.**

(312) 25—15.

Տիֆլիս Դօն. Ցենզուրою 3-го Мая 1895 г. Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանց։ Типогр. О. А. Меликъ-Шахназаріанца Воронц. Набережн. Церковный домъ